ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» հոկտեմբեր 2022թ. N 42-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ, ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կասեցնել քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված թվով 27 քաղաքաշինական սուբյեկտների համապատասխան գործունեությունը, մասնավորապես՝ շինարարության իրականացման թվով 12 լիցենզիա և թվով 27 ներդիր, շինարարության որակի տեխնիկական հսկողության թվով 1 լիցենզիա և թվով 1 ներդիր (համաձայն հավելվածի):
2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտների լիցենզիայի և (կամ) ներդիրի գործողության կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:
3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

   1) ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն,

   2) համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7/8/2022

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ